# *Արձանագրություն N 4*

**<< ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՋՐ-ՊԾ/2023-Լ-56>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

*ք.Երևան* *<<25>> <<05>>* ***2023թ.***

*ՀՀ ՆԳՆ ոստիկանության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՋՐ-ՊԾ/2023-Լ-56 ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝*

*ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՋՐ-ՊԾ/2023-Լ-56 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից՝ «ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հայտում հրավերով պահանջվող Հավելված 1-ը /դիմում հայտարարություն/ ներկայացվել է առանց ստորագրման և կնքման /ոչ ռեզիդենտի դեպքում/, չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը /Հավելված 1,2/ /ոչ ռեզիդենտի դեպքում/, /ՀՀ ռեզիդնտի դեպքում հրավերով սահմանված պահանջներին համապատասխան/ ինչպես նաև տեխնիկական բնութագրերում /1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժիններում /առաջարկվող ապրանքների նկարագրերը ամբողջական չեն, ինչպես նաև բացակայում են ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները, արտադրողի անվանումները և համապատասխան առաջարկվող տեխնիկական բնութագրերը:*

*ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՋՐ-ՊԾ/2023-Լ-56 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 23.05.2023 թվականին «ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին տրամադրել մեկ /1/ մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկում կատարելու համար: «ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել:*

*1. Հանձնաժողովը որոշեց՝*

*Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի առաջին մասի 6–րդ կետի բ ենթակետի պահանջները մասնակից «ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման, վերջինս կներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:*

*ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՋՐ-ՊԾ/2023-Լ-56 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ, 3-րդ չափաբաժիններով համարվում է չկայացած, քանի որ մասնակցի կողմից ներկայացված հայտերը մերժվել են, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը՝ ընթացակարգը հայտարարում է չկայացած:*

*"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:*

***Ընդունվեց որոշում՝*** *կողմ 3 դեմ 0 :*

**Հանձնաժողովի Նախագահ՝**

ՀՀ ՆԳՆ Ո ՊԾ կազմակերպման բաժնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ Դ. Հակոբյան

**Հանձնաժողովի անդամներ՝**

ՀՀ ՆԳՆ Ո ՊԾ տնտեսական բաժանմունքի պետ Ա. Ավագյան

ՀՀ ՆԳՆ Ո ՊԾ ոստիկանության փոխգնդապետ Ա. Սայադյան

**Քարտուղար՝**

ՀՀ ՔԾԾ 1-ին դասի առաջատար ծառայող Լ. Սահակյան